գանձապահին փոխադրել Պեսոիդոսակի ս. Սահակ-Մեսրոպ եկեղեցու ծխական հոդաբարձութեանը մի հազար հինգ հարիւր ռուբլի եկեղեցական և դպրոցական այն գումարից, որ փոխարքայի դիւանատունը 1908 թ. № 15835 գրութեամբ փոխադրել է Մինոդի անունով։

ԿՐՕՆԻԿԱՆ—ԲԱՐՈՅԻԿԱՆ

ԼԵՌԱՆ ՔԱՐՈԶԸ.

Իբրև իշխանութեամբ ուսուցանէր
և ոչ որպէս դպիրքն նոցա։
Մատթ. է, 29.

Լեռան քարոզի ընդունելութիւնը շատ տարբեր է եղել այլ և այլ ժամանակներում։ Գրեթէ ամենքն էլ հիացել ու բարձր գնահատման արժանի են համարել այս քարոզը, թէպէտև ամեն ոք իւր տեսակէտից։ Այսօր էլ ամենաաղատ խորհողներն անդամ համամիտ են եկեղեցական ուղղութեան հետևող ամենախիստ պահպանողականներին այն խնդրում, որ Յիսուսի այս քարոզն իրօք աննման է, ճշմարտապէս աստուածային խօսք և լաւագոյն բարոյական ուղեցոյց ամբողջ մարդկութեան համար։ Եւ սակայն հէնց այս միակ կէտումն էլ վերջանում է տարբեր ուղղութեանց ներկայացուցիչների ամբողջ համամտութիւնը։ Եկեղեցականները յանդիմանում են աղատախոհներին, որ սոքա ամբողջ Նոր-Կտակարանից լոկ Լեռան քարոզն են ընդունում ու խոստովանում, իսկ վերջիններս՝ թէ Նոր-Կտակարանի մնացած մասն ուղղակի խանգարիչ, հեղձուցիչ ու սպանիչ է Լեռան քարոզի վճիտ ու վեմ գաղափարների համար։ Այս ուղղութիւններից մէկի համար Լեռան քարոզը զուգորդուած է Աստուածորդու գաղափարի հետ, մինչդեռ

միւսի համար ընդունելի ու խոստովանելի է, ոչ այն պատճառով, որ Ցիսուսի խօսքն է, այլ որ համամիտ, համակերպ ու համաձայն է մարդկային բանականութեան։

Սակայն իրօք միանգամայն հաւաստի չէ Լեռան քարոզի համաձայնութիւնը խոհականութեան։ Եւ իսկապէս ինչու պէտք է այնքան բաղմաթիւ, ըստ ինքեան շատ խոհական մարդիկ իրենց ընթացքը չհամակերպէին Լեռան քարոզի պահանջներին։ Ապաքէն այն պարզ պատճառով, որ այս քարոզի պահանջները շատ աւելի մեծ են, քան ինչ որ ըստ ինքեան հասկանալի է ու բնականօրէն բղխում է մարդուս խոհականութիւնից։ Ով կամենում է անշեղ ընթանալ Լեռան քարոզի գծած շաւղով, նա հարկադրուած է վտանգի ենթարկուել ու մարդկանց առօրեայ մտածողութեան առաջ անմիտ համարուել, քանի որ նա պարտաւոր է լիովին համբերատար, հեզ ու սիրալիր լինել և իւր շահն ու եսը միանգամայն մոռացման տալով՝ անձը հանրութեան օգտին բոլորանուէր զոհ բերել, մի բան, որ՝ մարդկօրէն դատելով, իրօք անմտութիւն է։ Միմիայն Ցիսուս է կարողացել կատարել Լեռան քարոզի բոլոր պահանջները և դորա համար էլ փշեայ պսակով զարդարուել ու խաչ է հանուել։ Եւ նոյն կամ նման վախճան է ունենում ամեն ոք, որ հասել է Լեռան քարոզի բոլոր պահանջներին հետևելու կատարելութեան։

Պարտք ունինք շիտակ խոստովանելու, որ մեզանից և՛ ոչ ոք չի կատարում Լեռան քարոզի պատուիրանները։ Ո՞վ է այն մարդը, որ Լեռան քարոզն ուղեցոյց է դարձրել իւր կեանքի համար և կատարում է նորա պատուիրանները, ինչ պաշտօնի ու գործի էլ լինի։ Այսպէս չեն ոչ վաճառականները, ոչ կալուածատէրերը, ոչ քաղաքագէտները և ոչ այլ կոչման ու զբաղման մարդիկ։ Այսպէս չէ և ընդհանրապէս մարդս, երբ մէկը նորանից օգորմութիւն կամ փոխառութիւն է խնդրում և կամ երբ նա ընկերին որ և է չարամիտ գրպարտութեան համար դատարան է քաշում՝ մոռացման տալով տարապարտուց կրած տառապանքի մէջ եղած մխիթարութիւնն ու երջանկութիւնը։

Արդ՝ էլ ի՞նչ օգուտ և շահ է մեզ Լեռան քարոզի գոյութիւնը, քանի որ չենք հետևում նորա պատուիրաններին։ Օգուտը շատ մեծ է. նախ՝ նա վառ ու կենդանի է պահում մեր մէջ այն զգացումն ու գիտակցութիւնը մեր առօրեայ հոգսերով լի կեանքում, որ իսկական բարոյական բարձրութեան գագաթնակէտն անհասանելի է այս աշխարհում. և ապա՝ միևնոյն ժամանակ նա մեզ ոյժ և զօրութիւն է ներշնչում գոյութեան անողոք կռուի մէջ իսկ այնքան կայծեր ընդունել յաւիտենական սիրուց ու հրահրել մեր հոգու խորքում, որ չափով այդ հնարաւոր է։ Ճշմարիտ է, մի ինչ որ գերաշխարհային և անիրագործելի բան կայ Լեռան քարոզի մէջ, և սակայն հէնց դորա մէջն է նորա ադամանդեայ փայլը։

Եթէ մենք կարող լինէինք լիովին կատարել Լեռան քարոզի պահանջները, ապա նա չէր լինիլ այն յաւիտենական քարոզն ու անանց խօսքը, ինչ որ երբ և է հնչել է մարդկային շրթունքներից։

Դերմ. փոխադր. Ն. վ. Տ.–Մ.